



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԳԱԳԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 31-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՆԱԵՎ՝ ՆՈՒՅՆ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Գագիկ Խանդանյանի դիմումի հիման վրա՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի, այդ թվում նաև՝ նույն հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Գագիկ Խանդանյանի դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի դեկտեմբերի 10-ին: Սահմանադրական դատարանի դատական կազմի՝ 2021 թվականի դեկտեմբերի 27-ի ՍԴԴԿՈ-91 որոշմամբ գործն ընդունվել է քննության, իսկ Սահմանադրական դատարանի՝ 2022 թվականի հունվարի 11-ի ՍԴԱՈ-1 աշխատակարգային որոշմամբ գործով զեկուցող է նշանակվել Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանը, և դատաքննությունը նշանակվել է 2022 թվականի մարտի 1-ին: Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 31-ի ՍԴԱՈ-93 աշխատակարգային որոշմամբ գործով զեկուցող է նշանակվել Սահմանադրական դատարանի դատավոր Վ. Գրիգորյանը, ՍԴԱՈ-94 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է, իսկ ՍԴԱՈ-95 աշխատակարգային որոշմամբ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, գործի վարույթը կասեցվել է: Սահմանադրական դատարանը 2022

թվականի նոյեմբերի 22-ի ՍԴԱՌ-188 աշխատակարգային որոշմամբ, հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի դատավոր Հ. Թովմասյանի՝ գործի վարույթը վերսկսելու մասին առաջարկությունը, նշված գործի վարույթը վերսկսել է և դատաքննությունը նշանակել է 2022 թվականի դեկտեմբերի 2-ին:

2. Հաշվի առնելով, որ Սահմանադրական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴԱՌ-199 աշխատակարգային որոշմամբ սույն գործով զեկուցող է նշանակվել Սահմանադրական դատարանի դատավոր Է. Շաթիրյանը, և ՍԴԱՌ-200 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ գործի վարույթը կասեցնելու հիմք, մասնավորապես՝ անհրաժեշտ է սույն գործով պահանջել լրացուցիչ ապացույցներ, ուստի գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Գագիկ Խանդանյանի դիմումի հիման վրա՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի, այդ թվում նաև՝ նույն հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնել մինչև կասեցման հիմքերը վերանայլը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**

2 դեկտեմբերի 2022 թվականի
ՍԴԱՌ-201



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ